ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ՆԱԺԱՐՈՏՅՈԼՈ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 35 - 36 (16231) ՇԱԲԱԹ, 3 ՄԱՅԻՍԻ 2014 Թ. ԳԻՆԸ՝ 25 ԹԵԹՐԻ

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՆԱՐԱՎՈՐ ԱՄԵՆ ԻՆՉ ԱՆՈՒՄ Է ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԻԱՐԺԵՔ ՔԱՐՈԶԱՐՇԱՎԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ»

Վրաստանում նախընտրական իրավիճակի ուսումնասիրման նպատակով այստեղ է գտնվում NDI-ի պատվիրակությունը:

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու հետ հանդիպմանը, քննարկվեցին տեղական ինքնակառավարման ընտրությունների նախապատրաստման, քաղաքական սուբյեկտների ակտիվության եւ ընտրական միջավայրի հետ առնչվող հարցեր:

Վարչապետը հյուրերին ներկայացրեց այդ ուղղությամբ իրականացվող մոնիտորինգի արդյունքները եւ նշեց, որ իշխանությունների նպատակն է ապահովել ժողովրդավարական, ազատ ու արդարացի ընտրությունների անցկացումը: «Վրաստանի ղեկավարությունը հնարավոր ամեն ինչ կանի, որպեսզի քաղաքական կուսակցություններն ունենան լիարժեք քարոզարշավ անցկացնելու հնարավորություն»,- հայտարարեց վարչապետը:

Հանդիպմանն ընդգծվեցին միջգերատեսչական հանձնաժողովի աշխատանքի կարեւորությունը:

«ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ»

ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. «ՎՐԱՍՏԱՆԸ ԷՆԵՐԳԱԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆ Է»

Ինչպես արդեն հաղորդել ենք, Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին Պրահայում մասնակցեց «Արեւելյան գործընկերություն» հինգ տարի անց՝ նոր ռազմավարության ժամանակը» գագաթաժողովին:

Իր ելույթում նախագահն անդրադարձավ «Արեւելյան գործընկերության» երկրների միջեւ հարաբերություններին: Այդ առումով, Գիորգի Մարգելաշվիլին ընդգծեց Եվրախորհրդարանի կողմից ընդունված բանաձեւի նշանակությունը, որը նոր հեռանկարներ է բացում «Արեւելյան գործընկերության» երկրների միջեւ համագործակցության խորացման ուղղությամբ: Նախագահը նշեց, որ հինգ տարվա ընթացքում «Արեւելյան գործընկերությունը» Վրաստանին մեծ օգուտ բերեց, ինչը նպաստեց երկրում ժողովրդավարության զարգացմանն ու դրական գործընթացներին: Վրաստանի ղեկավարը խոսեց նաեւ Եվրահնտեգրման գործընթացի քաղաքական եւ տնտեսական նշանակության մասին, ներկայացրեց մի շարք նախագծեր, որոնք դրական արդյունքների կհանգեցնեն ողջ տարածաշրջանում: Գիորգի Մարգվելաշվիլու խոսքերով, «Վրաստանը՝ որպես Արեւելյան Եվրոպան եւ Ասիան կապող երկիր, հետաքրքիր հեռանկար է ստեղծում էներգամիջանցքի ու հաղորդակցությունների տեսանկյունից եւ երաշխավորում է էներգաանվտանգության ու կայունության ապահովումը»:

ՏԵՂԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԸ» ՍԿՍԵՑ ՔԱՐՈԶԱՐՇԱՎԸ

Ապրիլի 27-ին «Վրացական երազանք» կառավարող կոալիցիան անցկացրեց տեղական ընտրությունների քարոզարշավի մեկնարկային խորհրդաժողովը:

Խորհրդաժողովին ներկայացվեցին ինքնակառավարման 12 քաղաքների կոալիցիայի կողմից առաջադրված քաղաքապետերի թեկնածուները: Ելույթ ունենալով խորհրդաժողովում՝ Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին նշեց, որ, 2012 թվականի խորհրդարանական ընտրություններում հաղթանակից եւ իշխանության գլուխ կոալիցիայի գալուց հետո, հաստատվել է նոր միտում, անցկացվեցին նախագահական ընտրություններ, որոնք ազատ ընտրական միջավայրի, թափանցիկության եւ ժողովրդավարության տեսանկյունից աննախընթաց էին: «Ամենակարեւորն այն է, որ մեր ընտրողները համոզվեցին ընտրությունների արդարացի արդյունքների հարցում: Այսօր ողջ երկիրը նախընտրական փուլում է, եւ առջեւում նոր ընտրություններ են,

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ՀԱԿԱԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆ ԸՆԴԳԾՈՒՄ Է ՎՐԱՑ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մայիսի 2-ին, Վրաստանի խորհրդարանը երկրորդ եւ երրորդ ընթերցմամբ, ընդունեց «Խտրականության բոլոր դրսեւորումների արմատախիլ անելու մասին» օրենքը: Խորհրդարանում փաստաթղթի քննարկմանը նախորդել էին հոգեւորականների եւ հավատացյալների բողոքի գործողությունները, ինչպես նաեւ հոգեւորականության ներկայացուցիչների հետ խորհրդարանում անցկացված դռնփակ խորհրդակցությունները:

Օրենքի ընդունման դեմ կտրականապես հանդես են գալիս Վրաստանի Պատրիարքությունը, ոչ կառավարական մի շարք կազմակերպություններ: Նշենք, որ հակախտրականության օրենքը նախաձեռնվել է խորհրդարանի՝ մարդու իրավունքների կոմիտեի կող-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՄԱՅԻՍԻ 9-Ը՝ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՕՐ

Մայիսի 9-ին աշխարհի առաջադեմ մարդկությունը նշում է ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի 69-րդ տարելիցը:

Հաղթանակի տոնի կապակցությամբ, միջոցառումներ կանցկացվեն նաեւ Վրաստանում, մասնավորապես՝ Թբիլիսիում, Վակեի զբոսայգու հուշահամալիրում:

Տոնի առիթով, Թբիլիսիից պատերազմի վետերանների պատվիրակությունը, որի կազմում էին 90-ամյա Սերգեյ Միրզոյանը, Տարաս Չիչկիտաձեն եւ Շոթա Բուաձեն Թբիլիսիից ուղեւորվեցին Կուրսկ, որտեղ մասնակցեցին «Միասնությամբ նվաճած Մեծ հաղթանակ» չորրորդ միջազգային պատմամշակութային խորհրդաժողովին:

ՀԱՅԱՍՏԱՆ

ԳԱԼՈՒՍՏ ՍԱՀԱԿՅԱՆԸ՝ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Հայաստանի Ազգային ժողովում փակ քվեարկության արդյունքում Աժ նախագահ է ընտրվել Հայաստանի հանրապետական կուսակցություն խմբակցության ղեկավար, ՀՀԿ փոխնախագահ Գալուստ Սահակյանը:

Այս մասին քվեարկության արդյունքներն ամփոփելուց հետո Աժ ամբիոնից տեղեկացրեց Աժ հաշվիչ հանձնաժողովի նախագահ Սուքիաս Ավետիսյանը: Գալուստ Սահակյանը հավաքել է 101 ձայն, Հրանտ Բագրատյանը՝ 3 ձայն:

Գալուստ Սահակյանը 66 տարեկան է: Ավարտել է Երեւանի պետական համալսարանը՝ բանասերի մասնագիտությամբ:

Երկար տարիներ զբաղվել է մանկավարժությամբ, աշխատել է շրջանային գործադիր մարմնում:

1995 թվականին մեծամասնական համակարգով ընտրվել է Ազգային Ժողովի պատգամավոր: Հաջորդ երեք գումարումների խորհրդարանի պատգամավոր է ընտրվել համամասնական ընտակարգով (Հանրապետական կուսակցություն), ընդ որում՝ ՀՀԿ խմբակցության ղեկավարն է, ՀՀԿ փոխնախագահ, ՀՀԿ գործադիր մարմնի եւ խորհրդի անդամ:

Ամուսնացած է, ունի 2 որդի, 5 թոռնիկ:

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՀՐԱԺԵՇՏԻ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԵՎ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՀԵՏ

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին եւ վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, դիվանագիտական առաքելության ավարտման կապակցությամբ, հրաժեշտի հանդիպում ունեցան Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Հովհաննես Մանուկյանի հետ:

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին ընդունեց իր դիվանագիտական առաքելությունը ավարտած Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Հովհաննես Մանուկյանին: Հանդիպմանը կողմերը զրուցեցին երկու երկրների հարաբերություններից եւ հույս հայտնեցին, որ համագործակցությունն առաջիկայում է՛լ ավելի կխորանա:

Հովհաննես Մանուկյանը շնորհակալություն հայտնեց Վրաստանի նախագահին ցուցաբերած աջակցության համար եւ հաջողություններ մաղթեց երկրի զարգացման գործում:

Վրաստանի կառավարության ղեկավարի հետ հանդիպմանը Իրակլի Ղարիբաշվիլին Հովհաննես Մանուկյանին շնորհակալություն հայտնեց երկու երկրների միջեւ բարիդրացիական հարաբերությունների ամրապնդման գործում ներդրած ավանդի համար: Հանդիպմանը խոսք է եղել նաեւ երկկողմ հարաբերությունների խորացման հարցերի շուրջ:

Օգտվելով առիթից՝ Վրաստանի ղեկավարները Հովհաննես Մանուկյանին ջերմորեն շնորհավորեցին Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար նշանակվելու առթիվ:

Հովհաննես Մանուկյանը հրաժեշտի հանդիպում անցկացրեց նաեւ Վրաստանի արտաքին գործերի նախարար Մայա Փանջիկիձեի հետ:

Նույն օրը Հովհաննես Մանուկյանը ՀՀ դեսպանությունում հրաժեշտի հանդիպում ունեցավ վիրահայ համայնքի ներկայացուցիչների հետ:

Լուսանկարում.- Իրակլի Ղարիբաշվիլին Հովհաննես Մանուկյանի հետ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑԸ ԷՍՏՈՆԻԱ



Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին աշխատանքային այցով գտնվում է Էստոնիայում:

Վրաստանի ղեկավարը այցի շրջանակներում հանդիպումներ ունեցավ Էստոնիայի նախագահ Թոմաս Հենդրիկ Իլվեսի, խորհրդարանի նախագահ Էյկի Նեստորի, վարչապետ Տաավի Ռիվայսի հետ: Հանդիպումներում քննարկվեց երկու երկրների միջեւ քաղաքական եւ տնտեսական հարաբերությունների հարցերի լայն սպեկտրը, կանխագծվեցին երկկողմ ու բազմակողմ համագործակցության նոր ուղղությունները: Հանդիպումներում կրկին ընդգծվեց Եվրամիության հետ ասոցիացման համաձայնագրի շուտափույթ ստորագրման անհրաժեշտությունը: Էստոնացի գործընկերների հետ հանդիպմանը Վրաստանի նախագահը քննարկեց նաեւ Ուկրաինայում ստեղծված իրավիճակի հարցը:

ՏԵՂԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԸ» ՍԿՍԵՑ ՔԱՐՈԶԱՐՇԱՎԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

մենք սկսում ենք նոր փուլ եւ պատրաստվում նոր հաղթանակի: Համոզված եմ, որ այս ընտրությունները նույնքան ժողովրդավարական կլինեն, որքան նախորդները, դրա վկայությունը մեր կառավարության քաղաքական կամքն է»,- հայտարարեց վարչապետը:

«Վրացական երազանք» կոալիցիան հունիսի 15-ին անցկացվելիք տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում Թբիլիսիի քաղաքապետի պաշտոնում առաջադրել է Դավիթ Նարմանիայի, Ռուսթավիում՝ Դավիթ Չիքիայի, Քութայիսիում՝ Շոթա Մուրղուլիայի, Գորիում՝ Զուրաբ Չիրկվելաշվիլու, Բաթումիում՝ Գիորգի Երմակովի, Փոթիում՝ Իրակլի Կակուլիայի, Զուգդիդիում՝ Իրակլի Գոգոխիայի, Մցխեթայում՝ Ավթանդիլ Նեմսիծվերիձեի, Թելավիում՝ Պլատոն Կալմախելիձեի, Օզուրգեթիում՝ Բեգլար Սիորիձեի, Ախալցիխեում՝ Գիորգի Կոպաձեի, Ամբրոլաուրիում՝ Ռատի Նամգալաձեի թեկնածությունները:

Խորհրդաժողովում ելույթ ունեցավ նաեւ «Վրացական երազանք» ընտրական շտաբի ղեկավար Կախի Կալաձեն:

ՎՐԱՍՏԱՆ-ՆԱՏՕ

ԱԼՅԱՆՍԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՈՐ ՓՈՒԼԻ ՍՊԱՍՈՒՄՆԵՐՈՎ

Աշխատանքային այցով Թբիլիսիում է գտնվում Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ Ջեյմս Ապաթուրայը:

Այցի շրջանակներում, ալյանսի ներկայացուցիչը հանդիպումներ ունեցավ Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու, վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու, արտաքին գործերի նախարար Մայա Փանջիկիձեի հետ:

Հանդիպումներում նշվեց, որ ալյանսը դրական է գնահատում վերջին ժամանակներում Վրաստանում իրականացված բարեփոխումները: Վրացական կողմն առանձնակի ընդգծեց ՆԱՏՕ-ի հետ հարաբերությունների զարգացման նոր փուլի ակնկալիքները:

Հանրագումարելով կայացած հանդիպումների արդյունքները՝ Ապաթուրայը հայտարարեց. «Վրաստանի կառավարությունն ունի երկրի ապագայի հիանալի ձեւակերպված տեսություն, այն է՝ դառնալ եվրատլանտյան ընտանիքի անդամ: Բավարարված են առաջիկա ծրագրերի վերաբերյալ բանավեճերից:

Անդրադառնալով առաջիկա ընտրությունների հարցին՝ ալյանսի ներկայացուցիչը նշեց. «Երբ խոսում ենք ընդհանուր գնահատականների մասին, ապա ընտրական գործընթացը դրա բաղկացուցիչ մասն է: Վերջին ժամանակներս այդ ուղղությամբ նշանակալի քայլեր են կատարվել: Սակայն, կարեւոր նշանակություն ունի, թե ինչպես կանցկացվեն ընտրությունները»,- հայտարարեց Ապաթուրայը:

ՕՐԵՆՍԴԻՐ

ԸՆԴՈՒՆՎԵԼ ԵՆ ՎՐԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ՆՈՐ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

Վրաստանի խորհրդարանը երկրորդ ընթերցմամբ ընդունեց «Քաղաքացիության մասին» օրենքի փոփոխությունը: Նոր օրինանախագծով նորովի է կարգավորվում, եւ մի շարք դեպքերում դյուրացվում են Վրաստանի քաղաքացիության ստացման ու զրկելու մեխանիզմները:

Օրենքով արհեստականորեն բեղմնավորմամբ Վրաստանի տարածքում ծնված երեխան ստանում է Վրաստանի քաղաքացիություն, եթե պետությունը, որի քաղաքացիները երեխայի գենետիկ ծնողներն են, նրան իրենց քաղաքացի չեն համարում:

Բացի այդ, նորովի են սահմանվել չափահասների եւ անչափահասների համար քաղաքացիություն ստանալու պայմանները: Մասնավորապես, անչափահասներից չի պահանջվում երկրում բնակության հնգամյա ժամկետ, լեզվի եւ իրավական հիմունքների իմացություն, ինչպես նաեւ Վրաստանի տարածքում անշարժ գույքի տնօրինություն:

Դյուրացվել են Վրաստանի քաղաքացիությունից զրկելու հիմունքները, այն է՝ երկու տարվա ընթացքում անհարգելի պատճառով հյուպատոսային գրանցման բացակայությունը: Միաժամանակ, սահմանվել է Վրաստանի քաղաքացիությունից զրկելու անթույլատրելիությունը արտասահմանյան երկրի քաղաքացիություն ստանալու պատճառով այն անձանց համար, ում շնորհվել է Վրաստանի պատվավոր քաղաքացիություն:

Օրենքը նախատեսում է քաղաքացիության շնորհման ժամանակ բացառություններ անաշխատունակ եւ ֆիզիկական արատներով մարդկանց համար: Մասնավորապես, նրանք ազատվում են վրաց լեզվի, Վրաստանի պատմության եւ իրավունքի թեստավորումից:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ՀԱԿԱԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆ ԸՆԴԳԾՈՒՄ Է ՎՐԱՑ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

մից եւ հանդիսանում է Եվրամիության անդամակցության համար կարեւոր պայմաններից մեկը:

Օրինանախագծի համաձայն, արգելվում է բոլոր տեսակի խտրականությունը: Մասնավորապես, օրենքի նպատակն է պահպանել իրավահավասարության սկզբունքը, անկախ ռասայից, մաշկի գույնից, սեռից, քաղաքացիությունից, դավանանքից, ընտանեկան վիճակից, սեռական կողմնորոշումից, գենդերային նույնականությունից, քաղաքական հայացքներից եւ այլն:

Խտրականության վերացման եւ իրավահավասարության հարցերով վերահսկողությունը իրականացնելու է ժողովրդական պաշտպանը:

Հակախտրական օրինանախագծից հանվել էր ճնշումների հետ կապված կետը: Խոսքը վերաբերում է այն կետին, որտեղ նշված է, որ երկրում չպետք է հալածանքներ իրականացվի այն անձանց նկատմամբ, ում դեմ գոյություն ունի թշնամական, նվաստացուցիչ, արժանապատվությունը ոտնահարող կամ այլ տեսակի վիրավորական միջավայր: Ինչպես պարզաբանեց խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլին, պատգամավորները նշել են, որ այդ կետը բավականին մառախլապատ է եւ տարբեր մեկնաբանությունների առիթ է տալիս:

Արձագանքելով հակախտրականության մասին օրենքի շուրջ ծավալվող իրադարձություններին՝ Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին հայտարարեց, որ այն անպայման պետք է ընդունվի: «Ինչ խոսք, մենք անպայման կընդունենք հակախտրականության օրենսդրությունը, եւ ցանկանում եմ Վրաստանի քաղաքացիներին պարզաբանել, որ կառավարությունն ու անձամբ ես պատասխանատու ենք, որ երկրում երբեք չի ընդունվի օրենք, որը սպառնալիք ստեղծի երկրի ապագային եւ ազգային շահերին»,- հայտարարեց վարչապետը:

Իր հերթին, Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին Հանրային հեռուստատեսությանը տված հարցազրույցում նշեց, որ հակախտրականության օրենսգրքում սեռական թեմայով քարոզչություն չկա: Նախագահի խոսքերով, հակախտրականության օրինանախագծերը պետք է ընդունել մի շարք պատճառներով: «Դրանցից մեկն այն է, որ նման պահանջ է ներկայացված Եվրամիության ասոցիացման համաձայնագրում, ինչը նաեւ միջազգային քաղաքականության բաղադրիչներից մեկն է»,- նշեց Գիորգի Մարգվելաշվիլին եւ հավելեց, որ այդ օրենքի դեմ հանդես եկող մարդիկ լրիվությամբ տեղեկացված չեն: «Օրենքում բարոյական իրավունքների սահմանափակման կամ խախտման մասին խոսք չկա: Դրանում ասվում է միայն, որ անթույլատրելի է մարդկանց փոքրաթիվ այն խմբի խտրականությունը, որն այս կամ այն պատճառով մեզանից տարբերվում է: Ընդհանրապես, օրենքը սեռական թեմայի քարոզչություն չի անցկացնում, այն կամ արգելում է որեւէ բան կամ թույլատրում: Ոչ ոք մտադիր չէ փոխել վրաց ժողովրդի էությունը, ընդհակառակը, դրանում ընդգծվում է մեր հանդուրժողականությունը»,- հայտարարեց Վրաստանի նախագահը:

ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ



ՈՒԿՐԱԻՆԱ

ՍԿՍՎԵԼ Է ԼԱՅՆԱՄԱՍՇՏԱԲ ՀԱՏՈՒԿ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Ուկրաինայի ներկայիս իշխանությունները երկրի հարավ-արեւելյան մարզերի բնակչությանը ներկայացրել են զինաթափվելու պահանջ: Նշենք, որ վերոնշյալ պահանջը ներկայացվել էր ուկրաինական Սլավյանսկ քաղաքում անցկացված հատուկ գործողությունը սկսելուց հետո, որի ընթացքում վայր է գցվել երկու ուղղաթիռ, վնասվել է եւս մեկը: Ընդհարումների արդյունքում, երկու կողմերից կան զոհեր:

ԵԱՀԿ գործող նախագահ, Շվեյցարիայի նախագահ Դիդյե Բուրկհալտերը կապվել է ուկրաինական իշխանությունների հետ եւ պահանջել բացատրություններ Սլավյանսկում իրականացվող գործողության մասին:

17 ՄԻԼԻԱՐԴ ԴՈԼԱՐԻ ՎԱՐԿ ՈՒԿՐԱԻՆԱՅԻՆ

Արժույթի միջազգային հիմնադրամի գործադիր խորհուրդը հաստատել է Ուկրաինային տրամադրվելիք «stand by» վարկը, որը կազմում է 17 միլիարդ դոլար: Վարկը տրամադրվում է երկու տարի ժամկետով. նպատակն է աջակցել կառավարության տնտեսական ծրագրերին, վերականգնել մակրոտնտեսության կայունությունը եւ նպաստել տնտեսական աճին: Անհապաղ կտրամադրվի 3.19 միլիարդ դոլար, որից 2 միլիարդը կներկայացվի որպես բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորում: Երկու ամիս անց, հիմնադրամում տեղի կունենա կատարողական ծրագրի վերանայում, իսկ վարկի երկրորդ եւ երրորդ մասնաբաժինը հիմնադրամը նախատեսում է տրամադրել երկու ամիս անց, երբ կրկին կվերանայվի կատարողական ծրագիրը, իսկ մնացած գումարը նախատեսվում է տալ՝ հաշվի առնելով եռամսյակի ամփոփումների արդյունքները:

ՆՈՐ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԵՄ

Ֆրանսիայի եւ ԱՄՆ-ի նախագահներ Ֆրանսուա Օլանդն ու Բարաք Օբաման, Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը, ինչպես նաեւ Մեծ Բրիտանիայի եւ Իտալիայի վարչապետեր Դեւիդ Քեմերոնն ու Մատտեո Ռենցին հանդես են եկել Ռուսաստանի դեմ նոր պատժամիջոցների կիրառման օգտին:

Մեծ յոթնյակի երկրները պայմանավորվել են Ռուսաստանի հանդեպ պատժամիջոցների նոր փուլ սկսել եւ գործել արագ ու կազմակերպված: Յոթնյակը պայմանավորվել է գործել արագ, կիրառել լրացուցիչ մեխանիզմներ եւ խստացնել պատժամիջոցներն ընդդեմ Ռուսաստանի՝ նպատակ ունենալով այդ կերպ ապահովել մայիսին Ուկրաինայում կայանալիք նախագահական ընտրությունների խաղաղ ընթացքը: Այս անգամ Յոթնյակի ուշադրության կենտրոնում կլինեն Ռուսաստանի տնտեսությունն ու պատժամիջոցները, որոնք կվերաբերվեն տնտեսության տարբեր ճյուղերին:

ՎԱՏԻԿԱՆ

ԱՆՑԿԱՑՎԵՑ ՍՐԲԱԴԱՍՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ

Կաթոլիկ եկեղեցին սրբադասման պատմական արարողություն է կատարել: Երկու պապերի սրբադասման արարողությունը կատարվել է երկու այլ քահանայապետերի ներկայությամբ: Կաթոլիկ եկեղեցու երկու ակնավոր գործիչների՝ Հովհաննես 23-րդ եւ Հովհաննես Պողոս Բ պապերի սրբադասման արարողությանը մասնակցելու նպատակով, Սուրբ Պետրոսի հրապարակ էին ժամանել աշխարհի տարբեր երկրների ավելի քան 120 պատվիրակություն, 24 երկրի նախագահներ: Միավորած միջոցառմանը ներկա է եղել նաեւ հայ կաթոլիկների հոգեւոր առաջնորդները, Ներսէս Պետրոս ԺԹ Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց Կաթողիկոս-Պատրիարքը եւ հայ կաթողիկէ նվիրապետության եպիսկոպոսներ ու քահանաներ: Սրբադասման արարողությունը կատարել է Ֆրանցիսկոս Պապը:

Ճարաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՆՈՐ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Վրաստանի ֆինանսների նախարարությունը, Արժույթի միջազգային հիմնադրամի հետ միասին, աշխատում է Վրաստանի գործազրկության մակարդակի սահմանման նոր մեթոդի շուրջ:

Ինչպես հայտարարեց ֆինանսների նախարար Նոդար Խադուրին, դա կապված է տնտեսական հեռանկարների հարցով հիմնադրամի կանխագծումների հետ, որտեղ Վրաստանում գործազրկության մակարդակի ցուցանիշը չէր նշվել:

Նշենք, որ ընթացիկ տարվա համար Արժույթի միջազգային հիմնադրամը Վրաստանում կանխանշել էր գործազրկության 17,3 տոկոսի մակարդակ: Այդ ցուցանիշը, ֆինանսների նախարարության տվյալներով, գերազանցված է, եւ հարկ է այն վերանայել:

Ներկա դրությամբ, ֆինանսների նախարարությունն Արժույթի միջազգային հիմնադրամի ներկայացուցիչների հետ բանակցություններ է վարում այդ կազմակերպության կողմից Վրաստանում նոր ծրագրերի իրականացման շուրջ: «Հուսով ենք, որ հիմնադրամի նախագծերը լայն մեկնարկ կունենան ու դրական արձագանք կառաջացնեն դոնորների եւ ներդրողների շրջանում»,- հայտարարեց Նոդար Խադուրին: Ըստ նախարարի, ծրագրված նախագծերի իրականացման համար կօգտագործվեն ինչպես բյուջետային, այնպես էլ՝ ազգային բանկի պահուստային միջոցները:

ՆՈԴԱՐ ԽԱԴՈՒՐԻ. «ԱՅՍ ՏԱՐԻ ԿՈՒՆԵՆԱՆՔ ԱՌՆՎԱԶՆ 5 ՏՈԿՈՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃ»

Ինչպես հայտարարեց Վրաստանի ֆինանսների նախարար Նոդար Խադուրին, «Այս տարի կունենանք առնվազն 5 տոկոսի տնտեսական աճ, թեպետ առաջին եռամսյակի արդյունքներն առավել լավատեսության հիմք են ծառայում»:

Ֆինանսների նախարարը վերոնշյալ հայտարարությունն արեց բյուջեի պարամետրերի կատարման քննարկումների ժամանակ: «Առաջին եռամսյակի արդյունքները հուսադրող են եւ հաստատում են ինչպես Վրաստանի կառավարության, այնպես էլ՝ Համաշխարհային բանկի կանխագծումների իրատեսությունը»,- ընդգծեց Խադուրին եւ հավելեց, որ առկա է արտահանման ծավալի նշանակալի աճ, ինչը կարեւոր նշանակություն ունի մասնավոր հատվածի ակտիվության բարձրացման առումով: «Մեր ծրագրերը չեն փոխվել, մենք կրկին նշում ենք, որ երկրում կլինի առնվազն 5 տոկոսի տնտեսական աճ, թեպետի առաջին եռամսյակի արդյունքներն առավել լավատեսության հիմք են ծառայում»,- հայտարարեց նախարարը:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ՈՒԺԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՈՒՄ՝ ԹԲԻԼԻՍԻԻ ՍԱԿՐԵԲՈՒԼՈՅՈՒՄ

Թբիլիսիի սակրեբուլոյի «Վրացական երազանք-թբիլիսցիներ» խմբակցության նախագահ Գուլիկո Զումբաձեն չի բացառում սակրեբուլոյի նախագահ Իրակլի Շիխիաշվիլու իմպիչմենտի հարցի առաջադրման հնարավորությունը:

Զումբաձեի խոսքերով, սակրեբուլոյի մեծամասնությունում լուրջ ճգնաժամ է, ուստի մինչեւ տեղական ինքնակառավարման ընտրությունները, Թբիլիսիի սակրեբուլոյում կառաջադրվի սակրեբուլոյի նախագահի իմպիչմենտը, ինչպես նաեւ կավարտվի նոր մեծամասնության ստեղծման հարցը: «Սակրեբուլոյի նախագահը չի կարող վերահսկել իրավիճակը: Նա մեծամասնություն չունի: «Խրուշչովկաների» վերականգնման մասին հուշագրի կապակցությամբ նա պատասխանատվություն է ստանձնելու: Այդ հռչակագրի համար, օրինակ, ես պաշտոնաթող կլինեի»,- հայտարարեց Գուլիկո Զումբաձեն:

Նշենք, որ այսպես կոչված «խրուշչովկաների» վերականգնման մասին հուշագիրը Իրակլի Շիխիաշվիլին ստորագրել էր արաբական ներդրողի հետ: Թեպետ առկա տեղեկատվությամբ, վերոնշյալ նախագիծը չի իրականացվելու:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԴԱՎԻԹ ՍԵՐԳԵՅԵՆԿՈ. «ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՇԽԱՏՈՂ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՌՈՒՆԵՐԸ ԿԵՆՍԱԹՈՇԱԿ ՉԵՆ ՍՏԱՆԱ»

Ինչպես հայտարարեց Վրաստանի առողջապահության նախարար Դավիթ Սերգեյենկոն, 2013 թվականից երկրի ղեկավարությունը սահմանել է մորատորիում, ըստ որի, սոցիալապես անպաշտպանները լրացուցիչ եկամտի ստացման դեպքում էլ չեն զրկվի պետական նպաստից:

Նրա խոսքերով, կենսաթոշակային տարիքի մարդիկ Կենտրոնական ընտրական հանձնաժողովում եւ ընտրական մյուս հանձնաժողովներում աշխատանքի տեղավորման դեպքում, կենսաթոշակ չեն ստանա: «Հունիսին մենք նախաձեռնեցինք մի շարք մորատորիումներ, որի հետ կառավարությունը համաձայնեց: Այդ մորատորիումը տարածվում է այն մարդկանց վրա, ովքեր մինչեւ 2013 թվականի սեպտեմբերի 1-ը օրենսդրության խախտմամբ չեն նշել իրենց տարիքը եւ աշխատավարձի հետ միասին ստանում են կենսաթոշակ: Մորատորիումը նախատեսում է վերակարգավորել այդ պարտքը: Թեպետ օրենքը գործում է, եւ բոլոր նրանք, ովքեր աշխատում են հանրային ծառայությունում կամ կսկսեն աշխատել նման հաստատություններում, բացառությամբ հանրակրթական համակարգի աշխատողների, կենսաթոշակ չեն ստանա»,- հայտարարեց Դավիթ Սերգեյենկոն:

Ինչ վերաբերում է մասնավոր հատվածում աշխատող կենսաթոշակառուներին, ապա նախարարի խոսքերով, վերոնշյալ սահմանափակումը նրանց չի առնչվում:

ՀԱՄԱԺՈՂՈՎ

ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ՝ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՌԱՐԿԱ

Ապրիլի 26-27-ին, Քութայիսիում, Վրաստանի խորհրդարանի շենքում, անցկացվեց Հարավային Կովկասի երիտասարդ քաղաքական գործիչների ֆորումը:

Նշենք, որ նման ձեւաչափով դա երիտասարդ գործիչներ թվով երկրորդ համաժողովն էր: Այն կազմակերպել էր Բազմակուսակցական ժողովրդավարության Նիդերլանդների ինստիտուտը: Համաժողովին մասնակցել են Վրաստանի, Հայաստանի եւ Ադրբեջանի քաղաքական կուսակցությունների ակտիվ երիտասարդները: Երկօրյա համաժողովը բաղկացած էր երկու լիագումար նիստից եւ վեց աշխատանքային խմբից, որոնց մասնակցեցին քառասունհինգ երիտասարդ քաղաքական գործիչներ՝ Հարավային Կովկասի երեք երկրների խորհրդարանական կուսակցություններից:

Վրաստանը համաժողովում ներկայացված էր հանձինս «Վրացական երազանք» քաղաքական կոալիցիայի, իսկ Հայաստանը՝ Հայաստանի հանրապետական կուսակցության երիտասարդական կազմակերպության:

Համաժողովում քննարկվել են քաղաքական համակարգերը Հարավային Կովկասում, տնտեսության եւ բիզնեսի զարգացումը, Հարավային Կովկասի երկրների արտաքին քաղաքական առաջնայնությունները, մարդու իրավունքները եւ այլ թեմաներ:

Փակման խոսքի պատիվը տրվել է Հայաստանի պատվիրակ Հայկ Մամիջանյանին, ով իր ելույթում անդրադարձավ որոշումների կայացման գործընթացներին երիտասարդության մասնակցության հարցին: Նա մանրամասն ներկայացրել է, թե ինչ ներդրում կարող են երիտասարդներն ունենալ քաղաքականության մեջ, եւ ինչպես կարող են նրանք ավելի մեծ մասնակցություն ունենալ քաղաքական գործընթացներին:



ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՌԱՐԿԱ

Վրաստանի կառավարությունը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման «Վրաստան-2020» ռազմավարությունը կհաստատի համաժողովրդական քննարկումից հետո: Այդ որոշումն ընդունվել է երկրի վարչապետին առընթեր Տնտեսական խորհրդի՝ ռազմավարության քննարկմանը նվիրված նիստի ընթացքում: Նիստի ընթացքում քննարկվել են երկրի տնտեսական աճի նախադրյալները, ինչպես նաեւ Վրաստանի տնտեսության աճին խոչընդոտող գործոնները:

Նիստում ընդգծվել է, որ երկրում իրականացվող քաղաքականությունը պետք է հենվի տնտեսական ազատության եւ սեփականության իրավունքի պաշտպանության վրա:

ՎԱՎԵՐԱՑՎԵԼ Է ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԻ ԱՆՆՇԱՆ ԱՃ

Վավերացվել է բնակչության թվաքանակի աննշան աճ: 2014 թվականի հունվարի 1-ի տվյալներով, Վրաստանի բնակչությունը կազմել է 4,49 միլիոն մարդ, անցյալ տարվա նույն ժամանակաշրջանի 4,483 միլիոնի դիմաց:

Բնակչության 53,7 տոկոսը բնակվում է քաղաքներում, 46,3 տոկոսը՝ գյուղերում: Նրա 47,7 տոկոսը տղամարդիկ են, իսկ 52,3 տոկոսը՝ կանայք:

ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ ՀՆԱՐԱՎՈՐ Է ՓՈԽՎԻ

Վրաստանում ընտրողների թվաքանակը կարող է ավելանալ: Վրաստանի պետական ռեեստրի ազգային գործակալության կողմից Կենտրոնական ընտրական հանձնաժողովի փոխանցած տվյալներով, ընտրողների թիվը կազմում է 3533673 մարդ, թեպետ ԿԸՀ-ի կայքէջում ըստ ընտրատարածքների, ընտրողների թիվը կազմում է 3491105 մարդ:

Ընտրողների նորացված ցուցակը կփոխանցվի տեղամասային հանձնաժողովների՝ մայիսի 16-ին հրապարակելու համար, որից հետո ընտրողները կկարողանան ստուգել իրենց գրանցումը:

ՈՐՈՇՎԵՑ ՀՐԱԺԱՐՎԵԼ ՄԻԽԵԻԼ ՍԱԱԿԱՇՎԻԼՈՒ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Վրաստանի գլխավոր դատախազությունը հերթական անգամ հաստատեց, որ որոշել է հրաժարվել հարցաքննության համար ներկայանալուց հրաժարված երկրի նախկին նախագահ Միխեիլ Սաակաշվիլու վկայություններից: Այդ մասին հայտարարեց գլխավոր դատախազի տեղակալ Իրակլի Շոթաձեն: Նրա խոսքերով, հետաքննությունը կշարունակվի, անկախ հետաքննության հետ նախկին նախագահի համագործակցության հրաժարումից: «Նախկին նախագահ Միխեիլ Սաակաշվիլին չկատարեց իր քաղաքացիական պարտքը եւ չներկայացավ հարցաքննությանը, թեպետ այդ նշված է Վրաստանի սահմանադրությունում»,- հայտարարեց Շոթաձեն եւ հավելեց. «Արդարությունը բացահայտելու նպատակով, մենք կփորձենք վերոնշյալ բոլոր գործերով գտնել ապացույցներ: Անհատին պատասխանատվության կարելի է ենթարկել եւ, ապա փնտրտուք հայտարարել միայն համապատասխան մեղադրանքների ներկայացման հիման վրա»,- նշեց Իրակլի Շոթաձեն:

ԳՈՂԱՑԵԼ ԵՆ 75 ԳԼՈՒԽ ԱՆԱՍՈՒՆ

Ինչպես տեղեկացրել է Առաջին ալիքը, Ասպինձայի շրջանի արոտավայրերից գողացել են 75 գլուխ խոշոր եղջերավոր անասուն: Տեղի ոստիկանությունը սկսել է հետաքննությունը: Արդեն պարզվել է, որ գողացված անասուններին տեղափոխել են Թուրքիա: Տեղի բնակիչների խոսքերով, դա անասունների գողության առաջին դեպքը չէ, եւ իշխանություններից համապատասխան արձագանք են պահանջում:

ՆՈՐ ԱՌԱՐԿԱ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

«ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԿԴԱՌՆԱ ՊԱՐՏԱԴԻՐ

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին կառավարության նիստում հանդես եկավ Վրաստանի միջնակարգ դպրոցներում «Ձեռներեցություն» առարկայի պարտադիր ուսուցման նախաձեռնությամբ:

Կառավարության ղեկավարի հանձնարարությամբ, «Ստեղծիր ապագան» անվանմամբ ռազմավարական փաստաթուղթը մշակել է կրթության եւ գիտության նախարարությունը, այն ներկայացվել է Տնտեսական խորհրդի քննարկմանը: Առաջին փուլում, 2014-2015 ուսումնական տարում «Ձեռներեցության»՝ որպես պարտադիր առարկա, դասավանդումը կիրականացվի փորձնական ծրագրի շրջանակներում, Վրաստանի 100 դպրոցներում: Ծրագրի մանրամասն հայեցակարգը կրթության եւ գիտության նախարարությունը վարչապետին կներկայացնի մոտ ապագայում:

Ներկա դրությամբ հայտնի է, որ առարկան կդասավանդվի 11-րդ դասարանում, շաբաթական երկուական ժամ:

Ըստ Վրաստանի վարչապետի, դրա շնորհիվ աշակերտները կստանան ավելի շատ գիտելիքներ եւ կմշակեն ունակություններ, որպեսզի ապագայում դառնան ձեռնարկատերեր ու ստեղծեն նոր աշխատատեղեր:

Վարչապետի մտահղացմամբ, ծրագրի իրագործումը համատեղ կապահովեն կրթության ու գիտության, երիտասարդության գործերի եւ սպորտի նախարարությունները, ինչպես նաեւ Վրաստանի առեւտրա-արդյունաբերական պալատը:

Նշենք, որ ավելի վաղ, «Ձեռներեցություն» առարկան դպրոցներում դասավանդվում էր որպես ֆակուլտատիվ առարկա:

ԹԱՄԱՐ ՍԱՆԻԿԻՁԵ. «ԱԶԳԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ «ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ» ՈՒՍՈՒՑՄԱՆԸ ՆՇԱՆԱԿԱԼԻ ՏԵՂ ԿՀԱՏԿԱՑՎԻ»

Ինչպես հայտարարեց Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Թամար Սանիկիձեն, ազգային ուսումնական ծրագրում «Ձեռներեցություն» առարկայի ուսուցմանը նշանակալի տեղ կհատկացվի:

Արձագանքելով Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու հանրակրթական համակարգում «Ձեռներեցության» ուսուցումը պարտադիր առարկա դարձնելու մասին նախաձեռնությանը՝ Սանիկիձեն նշեց, որ այդ ուղղությամբ նախարարությունում բավականին ժամանակ է, ինչ աշխատանքներ են տարվում: «Ընդհանրապես ցանկանում եմ տեղեկացնել, որ ազգային ուսումնական ծրագիրը համընդհանուր վերստուգման է ենթարկվում: Այդ ձեւաչափով տարբեր հարցեր են քննարկվում: Մասնավորապես, օրակարգի հարց է, թե ազգային ուսումնական ծրագրում ինչ նոր լրացումներ են կատարվելու: Բնականաբար, այդ առումով «Ձեռներեցություն» առարկայի ուսուցմանը նշանակալի տեղ կհատկացվի»,- հայտարարեց կրթության նախարարը:

Նրա խոսքերով, ներկա դրությամբ, «Ձեռներեցություն» առարկան դեռեւս ընտրովի է, թեպետ նախարարությունում գտնում են, որ այն դարձնելու են պարտադիր առարկա: «Այդ նպատակով, մշակել ենք պիլոտային ծրագիր, որի մանրամասները կներկայացնենք մոտ ժամանակներս»,- հայտարարեց Թամար Սանիկիձեն:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՖԵՐՄԵՐՆԵՐԻՆ

Վրաստանի գյուղատնտեսության նախարարության տեղեկատվությամբ, Վրաստանի ողջ մասշտաբով, 2014 թվականի համար սակավահող ֆերմերներին գարնանային աշխատանքների աջակցության նախագծի շրջանակներում, մշակվել է 58496 հեկտար հողատարածք, ինչը 60 տոկոսով գերազանցում է անցյալ տարվա համապատասխան ժամանակամիջոցի ցուցանիշը:

Նախարարության տեղեկատվությամբ, ներկա դրությամբ, «Լիբերթի» բանկի կողմից տրվել է 362187 ագրոքարտ եւ կանխիկ է դարձվել 3390,5 հազար լարիին համարժեք գումար: Նշենք, որ պլաստիկ ագրոքարտերը հնարավոր է ստանալ «Լիբերթի» բանկի ցանկացած մասնաճյուղում, մինչեւ հունիսի 1-ը:

Գյուղատնտեսության նախարար Շալվա Փիփիայի խոսքերով, նախագծի շրջանակներում, կանխիկ է դարձվել 73884 քարտ, որոնք նախատեսված են հողերի հերկման համար եւ ընդհանուր առմամբ կազմում են 7 միլիոն լարիի գումար:

Ինչպես նշեցին նախարարությունում, 2013 թվականի համեմատությամբ, նախագծում ներառված է Թբիլիսիի շրջակա գյուղերի 4660 բնակիչ, ում համար լրացուցիչ հատկացվել է 318 հազար լարի:

Նշենք, որ գյուղատնտեսության նախարարությունը սակավահող ֆերմերների աջակցության նախագիծը սկսել է փետրվարի 1-ից: Պետական բյուջեից ե'ւ գյուղի, ե'ւ գյուղատնտեսության զարգացման համար հիմնադրամի կողմից ֆինանսավորվող նախագիծը կավարտվի օգոստոսին: Գյուղատնտեսական նախագծերի կառավարման գործակալության կողմից իրականացվող նախագծի բյուջեն կազմում է 90 միլիոն լարի: Այս տարի նախագծի արտոնություններից օգտվելու է 800 հազար սակավահող ֆերմեր:

Ինչպես հայտարարեց Շալվա Փիփիան, նախագծում կարող են ընդգրկվել այն ֆերմերները, ովքեր իրենց սեփականության ներքո կամ իրենց տնօրինության տակ ունեն մինչեւ 1,25 հեկտար գյուղատնտեսական նշանակության հողատարածք: Ֆերմերները բաժանված են երկու կատեգորիայի: Առաջին կատեգորիայում ներառված են այն ֆերմերները, ովքեր ունեն մինչեւ 0,25 հեկտար հողատարածք, երկրորդում՝ մինչեւ 1,25 հողատարածք: Կախված հողատարածքի չափից՝ ֆերմերներն ստանում են համապատասխան օգնություն:

Ինչ վերաբերում է նախագծի գործունեությանը Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանում, ապա այստեղ այդ օգնությունից կարող է օգտվել 44347 մարդ, որից 37070 արդեն ստացել է քարտը: Սամցխե-Ջավախեթիում, ընդհանուր առմամբ, ծրագրված է մշակել 30241 հեկտար հողատարածք:

Տարածաշրջանում գործում է գյուղատնտեսական 51 խանութ, որտեղ ֆերմերները կարող են օգտագործել իրենց ագրոքարտերը:

Ավելացնենք, որ Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանում լայն կիրառություն է գտել նաեւ գյուղատնտեսության նախարարության կողմից իրականացվող «Արտոնյալ ագրովարկեր» նախագիծը: Մասնավորապես, այդ նախագծով նախատեսված երկրորդ բաղադրիչի շրջանակներում, տարածաշրջանի 613 վարկատուի տրվել է 7065400 լարի: Այդ տարածաշրջանի 20 վարկատուի երրորդ բաղադրիչի շրջանակներում փոխանցվել է 2497354 լարի: Նշենք, որ հիմնական ոլորտը, որտեղ նպատակաուղղվել են արտոնյալ վարկերը, անասնապահությունն է: Երրորդ բաղադրիչի շրջանակներում, Սամցխե-Ջավախեթիում հիմնվել է երկու նոր արտադրություն, որոնց ֆինանսավորման համար հատկացվել է 831868 լարի:

ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

ԳՈԳԻ ԹՈՓԱՁԵ. «ՎՐԱՍՏԱՆՆ ՈՒ ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԵՆ ՄԻՄՅԱՆՑ»

Եվրամիության հետ Վրաստանի ասոցիացման համաձայնագրի ստորագրման հարցի հրատապ քննարկումների կապակցությամբ, մենք հանդիպեցինք Վրաստանի խորհրդարանի պատգամավոր, «Արդյունաբերությունը կփրկի Վրաստանը» կուսակցության ղեկավար, «Դազբեգի» ընկերության հիմնադիր Գոգի Թոփաձեի հետ:

- Բատոնո Գոգի, Եվրամիության հետ Վրաստանի ասոցիացման համաձայնագրի ստորագրումը թեւակոխել է եզրափակիչ փուլ: Համաձայնագրի հոդվածների վերջնական համաձայնեցման համար, վերջերս Թբիլիսիում էր գտնվում եվրակոմիսար Շտեֆան Ֆուլեն, որը մի շարք հանդիպումներ անցկացրեց ինչպես երկրի իշխանությունների, այնպես էլ՝ գործարար շրջանների ներկայացուցիչների հետ: Բացի այդ, ՁԼՄ-ներում տպագրվեց առեւտրի միջազգային պալատի հայտարարությունն այն մասին, որ կառավարությունը, ասոցիացման համաձայնագիրը ստորագրելուց առաջ, պարտավոր է խորհրդատվություններ անցկացնել գործարար շրջանների ներկայացուցիչների հետ: Ի՞նչ կասեիք այդ կապակցությամբ:

- Բնականաբար, Վրաստանի համար ամենահեռանկարային ուղին Եվրամիության անդամակցությունն է, եւ մենք հնարավոր ամեն ինչով միտված ենք այդ ուղղությամբ: Մյուս կողմից, մենք պարտավոր ենք մանրակրկիտ ծանոթանալ բոլոր այն պայմաններին, որոնք ներառված են համաձայնագրում: Ընդ որում, խոսքը վերաբերում է ոչ միայն քաղաքականությանը, այն ավելի առավել ընդգրկուն հասկացություն է, եւ որին մասնակցելու են բոլորը՝ տնտեսագետները, գիտնականները, հասարակայնությունը, ոչ կառավարական հատվածը: Հարկ է մանրակրկիտ հաշվարկել եւ հստակորեն գիտակցել Եվրամիության հետ համաձայնագրի բոլոր՝ ինչպես դրական, այնպես էլ բացասական կողմերը:

Օրինակ, փաստ է, որ, առանց համապատասխան ուսումնասիրությունների վերլուծության, մենք անդամագրվեցինք Առեւտրի համաշխարհային կազմակերպությանը, որը գործնականում ոչ մի օգուտ չտվեց: Եվրամիության ասոցիացման հարցում էլ շտապողականությունը ոչ մի լավ արդյունքի չի հանգեցնի: Հարցը պետք է մանրամասն ուսումնասիրվի: Օրինակ, երբ Լեհաստանն անդամագրվում էր Եվրամիությանը, այնտեղ մի քանի ամիս շարունակ ողջ երկրով քննարկում էին համաձայնագրի մանրամասները, եւ արդյունքում՝ լեհերին հաջողվեց Եվրամիությանը պարտադրել առանձին հոդվածների վերանայումը: Մենք էլ պետք է այդ ձեւով վարվենք:

Գաղտնիք չէ, որ շատ երկրներ, որոնք ստորագրել են Եվրամիության անդամակցության համաձայնագիրը, հայտնվել են ծանր վիճակում: Օրինակ՝ Բուլղարիան, Լիտվան, Լատվիան, որոնք ստիպված եղան կանգնեցնել մինչ այդ իրենց մոտ բարձր մակարդակով գործող արդյունաբերական շատ ճյուղերի գործունեությունը: Այդ հարցում մենք պետք է ցուցաբերենք սկզբունքայնություն, որը, դրական արդյունքներից բացի, կբարձրացնի երկրի վարկանիշը:

- Արդեն հրապարակվել է Եվրամիության հետ ասոցիացման համաձայնագրի տեքստի թարգմանությունը: Դուք այն կարդացե՞լ եք եւ չե՞ք գտնում, արդյոք, որ խորհրդարանը պետք է սկսի դրա քննարկումը:

- Բնականաբար, մենք անպայման այն կքննարկենք խորհրդարանում, սակայն ներկա դրությամբ կարեւոր է, որ փաստաթուղթը մանրամասն ուսումնասիրվի, քանզի անհասկանալի, անորոշ դրույթները դրանում շատ են: Հուսով եմ, որ մինչեւ օգոստոս այդ հարցում հստակություն կմտցվի: Եվրամիության ասոցիացումը քաղաքակիրթ ուղղություն է, եւ եվրաինտեգրումն անհրաժեշտություն է Վրաստանի համար, թեպետ մյուս կողմից՝ Եվրամիության համար արտակարգ հետաքրքրություն է ներկայացնում Վրաստանի աշխարհագրական դիրքը: Եվրաինտեգրման ուղին հեռանկարային է, սակայն մենք այն չպետք է անցնենք՝ ինչպես իրականացրինք Առեւտրի համաշխարհային կազմակերպության անդամագրության ժամանակ, երբ մենք առանց հաշվի առնելու Վրաստանի առաջնահերթությունները, նույնիսկ այն ուղղությունները, որոնք մեզ վերապահում էր այդ կազմակերպությունը, ստորագրեցինք անդամագրության պայմանագիրը:

- Ի՞նչ կարող ենք քաղել եվրաինտեգրման ուղին անցած երկրների փորձից:

- Այն ամենը, ինչի մասին վերեւում խոսեցի, ելնում է հենց այդ փորձի հաշվառումից: Մեծ է այն երկրների թիվը, որոնք բառացիորեն փոշմանել են, որ Եվրամիության անդամագրության ժամանակ չեն պնդել իրենց պայմանների կատարման հարցում: Վերջերս գտնվում էի Լիտվայում, որտեղ շատ հանդիպումներ ունեցա: Ժամանակին այդ ծաղկող երկրում ներկայումս բազում հիմնախնդիրներ են առաջացել: Բնակչության գրեթե 40 տոկոսն աշխատանքի որոնումներով հեռացել է երկրից: Իսկ ինչ վերաբերում է տնտեսական նրբություններին, ապա պարտադիր չէ, որ ասոցիացման բոլոր պայմաններն առաջին իսկ տարվա ընթացքում կատարվեն: Օրինակ, Լեհաստանը նոր պայմաններում իր էկոնոմիկայի նախապատրաստման համար պայմանագրով իրեն վերապահեց 3-5 տարի ժամանակահատված:

Թեպետ կա նաեւ այլ ծայրահեղություններ: Օրինակ, Ադրբեջանը չընդունեց Եվրամիության ներկայացված պայմանները եւ հանդես եկավ արմատական հայտարարությամբ: Բնականաբար, այդ ուղին մեզ համար ձեռնտու չէ, թեպետ մյուս կողմից մենք պարտադիր կարգով պետք է ներկայացնենք մեր պայմանները: Համոզված եմ, որ այնպիսի հզոր միավորում, ինչպիսին Եվրամիությունն է, Վրաստանի հետ հարաբերությունների շատ հարցերում կարող է դիմել զիջումների, եւ մեր նկատառումները հաշվի կառնվեն:

ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ